

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆԱԳԼՈՒԽ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՌՈՒՍԱՅ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

### I.

Յայտնի է, որ Ռուսաց սրբազան Սինոդին կից Բարձրագոյնս Հաստատուած է առանձին տառան, եկեղեցական ժողովում քննուելիք խնդիրների մշակման համար. այս տառանի նրկրորդ բաժանմունքը յատկապէս զբաղւում էր Կովկասի պրաւոսլաւ եկեղեցու գործերի կարգաւորման խնդիրներով, և անցեալ 1906 թուի յունիս, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին իւր նիստերը նուիրեց վրաց եկեղեցու աւատկեֆալիայի խնդրի քննութեանը. նիստերը տեղի էին ունենում Նիկանդր արքեպիսկոպոսի նախագահութեամբ, նրա ընակարանում՝ Աղէքսանդր-Նևսկու վանքում\*. մասնակցում էին յայտնի հոգեւորականներ և և եկեղեցական գիտութիւնների պրոֆեսորներ, ի միջի այլոց Սոխումի Կիւրիոն և Իմերէթի Լէօնիդ՝ Վրացի եպիսկոպոսները, Կովկասին քաջ յայտնի Վաստորգով աւագ քահանան, իսկ նոյեմբերից հրաւիրւում են մասնակցութեան Յագարէլի և Մառ պրոֆեսորները, իբրև մասնագէտներ վրաց պատմութեան և գրականութեան:

Նիստերում կարգադրւեցան մի շարք զեկուցումներ, սրանց մէջ հեղինակներն աշխատում էին խնդիրը պարզել պատմական և կանոնական հիմունքներով և եկեղեցական բարիքի՝ գործնական տեսակէտից. վիճաբանութիւնների նիւթ էին դառնում զեկուցումների մէջ արտայայտուած մտքերը, ուստի խորհրդակցութիւնների

Նիստերի արձանագրութիւնները տպուեցան Церковныя Вѣдомостя շաբաթերթում:



ընթացքը լիովին ըմբռնելու համար անհրաժեշտ է ընթերցողներին ծանօթանալ զեկուցումներից կարևորներին հետո—

Պարապմունքներն սկսուեցան Սոխումի Կիւրիոն եպիսկոպոսի զեկուցումներով. նիստերի ամբողջ ընթացքում նա կարգաց չորս զեկուցում, առաջինը վրաց եկեղեցական խնդրի մասին պատմական տեսակէտից, երկրորդը այն հանգամանքների մասին, որոնք ստիպում են վրաց ժողովրդին ձգտել եկեղեցական ինքնավարութեան, երրորդ զեկուցման մէջ մանրամասն պարզւում են եկեղեցու անկախութեան պատմական հիմունքները, իսկ չորրորդի մէջ Կիւրիոն պաշտպանում է ազգայնական սկզբունքը եկեղեցու մէջ։ Որպէս զի ընթերցողի համար խնդիրը պարզ լինի, մէջ կը բերենք նախ առաջին, երրորդ և չորրորդ, և ապա երկրորդ զեկուցման բովանդակութիւնը—

Ա. Զեկուցման հեղինակը՝ առանց մտնելու մանրամասնութիւնների մէջ՝ ասում է, թէ «անկասկածելի պատմական վաւերացումները վրաց, յունաց, ասորաց և արաբաց լեզուներով վկայում են, որ վրացիք ընդունելով քրիստոնէութիւնը Բիւզանդիայից, նաև եկեղեցական նուիրարապետութիւնը և եկեղեցական վարչական հաստատութիւնները, հէնց չորրորդ դարի սկզբին, և ենթարկուելով Անտիոքի աթոռի իրաւասութեանը, աշխատում են հետըզհետէ ազատուել մայր եկեղեցու խնամակալութիւնից և կազմակերպել ինքնուրոյն ազգային եկեղեցի սեփական կաթողիկոսի իշխանութեան ներքոյ»։

Վրաստանում առաջ են գալիս ազգային—եկեղեցական, կրօնական կեդրոններ, հոգևոր լուսաւորութեան վայրեր, գրւում են բազմաթիւ աստուածապաշտական գրքեր մայրենի լեզուով. ծաղկում է նաև վրաց քաղաքական կեանքը, զօրանում է վրաց թագաւորութիւնը—Երբ Անտիոքն ընկնում է արաբների իշխանութեան տակ (638 թ.), վրացիք ձգտում են ազատուել այնտեղի պատրիարքի իրաւասութիւնից և անկախօրէն վարել իրենց եկեղեցական գործերը, Զգտւումը հետզհետէ զօրանում է և 8-րդ



դարի կիսին. 751 թ. Անտիոքում Թէոֆիլակա պատրիարքի օրով եկեղեցական ժողով է կայանում, յայտարարում է վրաց եկեղեցին կատարեալ ինքնագլուխ (աւտոկեֆալ) և արևւմ է հաստատութեան թուղթ. Այս թուականից սկսած արեւելի և արեւմտքի եկեղեցիները և եկեղեցական պատմագիրներն ու կանոնագէտներ համարում և դրում են Մցխէթի կաթողիկոսական աթոռն ինքնավար. Այսպիսով 8-րդ դարի կիսից սկսած մինչև 1811 թիւը վրաց եկեղեցին միանգամայն ազատ էր և կաթողիկոսները կառավարում ու դատում էին անկախ որ և է արտաքին իշխանութիւնից. Աստուծոյ խօսքի, առաքելական և եկեղեցական կանոնների հիման վրայ, գումարելով սեփական նախաձեռնութեամբ ազգային եկեղեցական ժողովներ և այնտեղ յայտնելով իրանց վճիռները. — Սակայն երբ Վրաստանն ինքնակամ միացաւ ռուսաց պետութեան հետ 1801 թ., ռուսաց սրբազան Սինոդը չկարողանալով հաշտուել վրաց անկախ կաթողիկոսի գոյութեան հետ, սկսեց աշխատել վրաց եկեղեցին իւր հովանաւորութեանը ենթարկելու, շնայելով որ Պաւէլ I կայսրը որոշ հրաման\* էր տուել վրաց եկեղեցուն ձեռնաձախ չլինել.

Վրաստանի գլխաւոր հրամանատար գեներալ Աորմասովի ջանքերով վրաց Անտոնիոս Բ. կաթողիկոսը կանչուեցաւ ս. Սինոդ 1810 թ., իբրև թէ վրաց եկեղեցու գործերի կարգաւորման համար խորհրդակցելու, իսկ 1811 թ. յունիսի 30-ին նոյն գեներալ Աորմասովի խորհրդով նրա տեղ նշանակուեց, հակառակ առաքելական 30 և 35 և Անտիոքի ժողովի 22 կանոնի, Վարլամի եպիսկոպոսը Վրաստանի էքզարխ և Մցխէթի մետրապօլիտ. Այսպիսով խախտուեցան կանոններն ու աւանդութիւնները, կատարուեց մի անարդարութիւն, որ եկեղեցու պատմութեան մէջ նմանը չունի. Սինոդն այդ մասին չհարցրեց վրաց

\* Рескриптъ, Акты Кав. Арх. Ком. т. III, стр. 359, т. I, стр. 413.



ժողովրդի և հոգեորականութեան ազատ ցանկութիւնը, չստացաւ եկեղեցական ժողովի հաւանութիւն: Եկեղեցական ժողովների կանոններով միշտ պահպանուել են առանձին եկեղեցիների անկախութիւնը և իրաւունքները (Կոստանդ. 1 ժողովի 2 կանոն, Եփեսոսի ժող. 8 կանոն, առաքել. 35 կանոն), Տիեզերական որոշումները չեն կարող փոխել առանձին եկեղեցիները, այլ միայն տիեզերական ժողովները:—

Պատմական այս համառօտ տեսութեան եզրակացութիւնն այն է, որ պէտք է վերականգնի վրաց եկեղեցու լիակատար անկախութիւնը, որով միայն վրաց եկեղեցին կարող կը լինի ազատ և կանոնաւոր բարգաւաճել:

Գ. զեկուցման մէջ Կիւրիոն աւելի պարզում և հաստատում է վերայիշեալ մտքերը պատմական մանրամասնութիւններով, նա բերում է Անտիոքի մօտի վրաց վանքի վանական Եփրեմ Մծիրէի վկայութիւնը, որ Անտիոքի ժամանակագիրներից տունելով գրում է.

Վրաց ժողովրդին մկրտելու համար Կոստանդին Մեծի կողմից Վրաստան ուղարկուած եպիսկոպոսն էր Անտիոքի պատրիարք Եւստասիոսը, որը և ձեռնադրեց Վրաստանի համար արքեպիսկոպոս—կաթողիկոս, Այնուհետև վրաց կաթողիկոսները ձեռնադրում էին Անտիոքում, և վրաց եկեղեցին, թագաւորի և իշխանների որոշմամբ, իւրաքանչիւր տարի ուղարկում էր Անտիոքի պատրիարքական աթոռին հազար ընտանիքի կալուածներից եկամուտ, այս հարկը արւում էր Ս. մեռնի օրհնութեան նիւթերը գնելու համար, որ օրհնում էր միմիայն Անտիոքում: Անտիոքի Թէոփիլակոս պատրիարքը (741—751 թ.) Վրաստանից եկած երկու վանականի խնդրքով ժողով գումարեց միաւրապախաններից, արքեպիսկոպոսներից և եպիսկոպոսներից և ժողովի որոշմամբ չնորհեց վրացիներին պրօտրեպոսկոն, այսինքն մի թուղթ, որի զօրութեամբ վրաց եպիսկոպոսների ժողովը կարող էր կաթողիկոս ձեռնադրել նրան, որին կընտրէր նոյն եպիսկոպոսների ժողովը, այն պայմանով սակայն, որ կաթողիկոսը պաշտամնա



ժամանակ յիշատակէր Անտիոքի պատրիարքին և տարեկան ուղարկէր Անտիոքի աթոռին հազար գրակօն: Այս գումարը վրացիք վճարում էին Անտիոքի աթոռին մինչև Յովհաննէս պատրիարքի օրերը (987—1010). վերջինս այդ տարբը զիջաւ Երուսողէմի Օրենտէս պատրիարքին: Թէոֆիլակտի օրերից Վրաստանում յիշատակում էին միմիայն Անտիոքի պատրիարքին, որը իւր իշխանութիւնը գործ էր գնում Վրաստանի վրայ միմիայն այն ժամանակ, երբ առաջ էին գալիս անկադղութիւններ և հերձուածներ եկեղեցու մէջ. այդպիսի դէպքերում Պատրիարքն ուղարկում էր Վրաստան էրզարխ, ինչպէս պատահեց Թէոդորոս պատրիարքի օրով (1034—1042), որ ուղարկեց Վրաստան Վասիլիոս Գրամատիկոսին, ակակեան հերձուածը վերացնելու համար:

Եփրեմ Մծիրէին համաձայն պատմում է վրաց եկեղեցական անկախութիւն ձեռք բերելը 8-րդ և 11-րդ դարերում, Անտիոքի ս. Սիմէօնի վանքի արեղայ Նիկոն, որ ժամանակակից էր Եփրեմին:

Այսպիսով սարեմն արևելեան Վրաստանի—Վերին Քարթլինայի կաթողիկոսին լիակատար անկախութիւն է տրուած 8-րդ դարի կիսին: Սակայն յետին դարերի մի տեղեկութեան համաձայն վրաց եկեղեցուն տրուած է աւտօսկեֆալիա 11-րդ դարում: Արաբ քահանայ Միխայիլ Բրեք 1767 թ. կազմել է Անտիոքի պատրիարքների յուշակը, որտեղ հետեւեալ տեղեկութիւնն է տալիս.

Վրացիք գալիս են Անտիոքի Պետրոս Գ. պատրիարքի մօտ (1053—1057), ըստ վաղեմի սովորութեան նրանից ձեռնադրուելու, և յայտնում են, որ մեծամեծ նեղութիւններ են կրում իրանց վրայ բռնացող ազգերից: Պետրոս Գ. ժողով է գումարում եպիսկոպոսներից և, փոխանակ հայոց կաթողիկոսի, որ նրանց դաւանութիւնից շեղուել էր, ձեռնադրում է նրանց վրայ ուրիշ կաթողիկոս և սահմանում է, որ նա եպիսկոպոսներ ձեռնադրէ Վրաստանի համար և լինի ինքնազուլիս, իսկ պաշտամունքի մէջ յիշատակէ Անտիոքի պատրիարքին, ինչպէս անում էր և



առաջին կաթողիկոսը, որ ձեռնադրուած էր Իվերիացոց վրաց Անտիոքի Թէոփիլակոս պատրիարքից:

Պատմական այս իրողութիւնը Կիւրիոն եպիսկոպոս բացատրում է նրանով, որ Բրեքի յիշած ինքնագլուխ Իվերացոց կաթողիկոսը վերաբերում է Վաստանի մի ուրիշ մասին: Բացի իվերական հնագոյն թագաւորութիւնից, որի մայրաքաղաքներն էին հետզհետէ Մցխէթ և Թիֆլիս, կար նաեւ երկրորդ Իվերիա, որ հանդէս եկաւ 7-րդ և 8-րդ դարերում: Այս նոր թագաւորութիւնը զօրացաւ մանաւանդ 8-րդ դարից սկսած Արդանուչի վրացի Բագրատունիների շնորհիւ: Աշոտ Կիւրապաղատի (787—826) և ուրիշների, որոնք դեռ 8-րդ դարում Կղարջքում և Արտանուչում բազմաթիւ միաբնակ հայերի յունագաւան դարձրին, իւր կեդրոնական դիրքի և ամուր բերդի շնորհիւ Արտանուչը արագ հարստացաւ և նշանակութիւն ստացաւ: Կոստանդին Պորփիրոզենէս պատմիչը համարում է Արտանուչը ընդարձակ, ամուր և վաճառահաջ քաղաք, ուր գալիս էին նրա օրով Տրապիզոնի, Իվերիայի, Աւարիայի, Հայաստանի և Սիրիայի ապրանքները: Վրաց միասինարական գործունէութեան շնորհիւ սկսեցին առաջ գալ Վրաստանի դրացի գաւառներում, որոնց բնակիչներն առաւելապէս հայեր էին, յունագաւան վրացական թեմեր՝ Անիի, Կարսի և Ալաշկերտի թեմերը: 10-րդ դարում Արտանուչի Բագրատունիների թագաւորութիւնը հասաւ իւր զօրութեան գագաթնակէտին: Դաւիթ Մեծ կիւրապաղատ թագաւորը վրաց, յունաց և հայոց միաձայն վկայութեամբ 976 թ. կարողացաւ 12000 ընտիր վրացի զօրք ուղարկել Բիւղանդիա, ապստամբ Բարդա Սկլերոսի դէմ՝ կռուելու: Այս թագաւորութեան սահմանների մէջ մտնում էին նաեւ Վերին Քարթալինայի նահանգները՝ Կլարջէթ և Տաօ (Կղարջք և Տայք), Երկրորդ անգամ, 11-րդ դարում տրուած աւտոկեֆալիան վերաբերում է ահա այս Իվերիային, որի բնակիչները գլխաւորապէս վրացիներ էին:

Դաւիթ կիւրապաղատ մեռաւ 1001 թ. անգուակ, իւր



հողերը կտակեց յունաց Վասիլ II կայսրին, որը և դարձրեց Իվերիան սահմանային թեմ<sup>1</sup>։ այդ թեմը հետզհետե մեծացաւ, ընդարձակելով արեւելեան սահմաններն ի հաշիւ վրաց և հայոց իշխանական տների։ Երբ Անին միացաւ յունական երկրներին, դարձաւ իվերական մայրաքաղաքը, իսկ նրանից յետոյ Կարսը, այն դաւառները, որ առաջ հայոց կաթողիկոսի իշխանութեան տակ էին, միացան իվերական յունական թեմին, և քանի որ նոր Իվերիան առանձին քաղաքական միութիւն էր կազմում, իրաւունք ունէր եկեղեցական առանձին վարչութիւն ունենալու, անկախ Անտիոքի պատրիարքութիւնից, որ այն ժամանակ արաբների իշխանութեան տակ էր։ Ահա այս էր սեփական անկախ կաթողիկոս ունենալու շարժառիթը և սրանով է բացատրւում Միխայիլ Բրեքի վկայութիւնը, թէ հայոց կաթողիկոսը շեղուեց դէպի միաբնակութիւն և նրա փոխանակ կարգուեց նոր կաթողիկոս։

Միխայիլ Պափլագոնի օրով վրաց Բագրատ IV թագաւորը (1027—1072) ժառանգական իրաւունքով ձգտում էր իվերական թեմը իւր իշխանութեան տակ առնել, ուստի և խեթ աչքով էր նայում բիւզանդական տիրապետութիւնների վրայ արեւելքում։ ԺԱ-րդ դարի վերջերից Իվերիայի թեմը դէպի անկումն էր գնում. նրա հարաւային մասին տիրեցին թուրքերը, իսկ կարճ ժամանակից յետոյ նրա հողերը միացան վրաց թագաւորութեանը։ Այսպէս ուրեմն, երկրորդ անգամ աւտոկեֆալիա տրուել է ոչ թէ Մցխէթի աթոռին, այլ Արտանուշի, Տայքի, Կղարջքի և Սամցխէի Բագրատունիների Իվերիային, որի մեծագոյն մասը յետագայում դարձաւ իվերական թեմ<sup>2</sup>, և Խաղտիքի թեմի անկումից յետոյ մեծ նշանակութիւն ունեցաւ բիւզանդական կայսրութեան պատմութեան մէջ։

Պատմական այս տեսութիւնը նախապատրաստական փողովին ներկայացնելուց յետոյ՝ Կիւրիոն եպիսկոպոս իւր չորրորդ զեկուցման մէջ պաշտպանում է ազգայնական սկզբունքը, առաքեալները, իրանց վարդապետի պատուէրի համաձայն, քարոզեցին աւետարանը հեթանոսների մէջ,



խրաքանչիւրին իւր մայրենի լեզուով, եկեղեցու համար բոլոր ազգութիւնները հաւասար են. «չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի»: Առաքելական 34-րդ կանոնն ասում է. «խրաքանչիւր ազգի եպիսկոպոս պէտք է համարուի նոյն ազգի եկեղեցու պետ»: Այսինքն իւրաքանչիւր ժողովուրդ պէտք է ունենայ իւր հոգեւոր պետը, եկեղեցական ժողովները պահպանել են ազգային եկեղեցիների իրաւունքները, իւրաքանչիւր ժողովուրդ պէտք է օգտուի եկեղեցական ինքնորոշումով: Բոլոր ժողովուրդներն ընդհանուր քրիստոնէական եկեղեցու մէջ հաւասար են և իրանց անկախութիւնը պահելով միանում և կազմում են մի քրիստոնեայ եկեղեցի:

Այս երեք զեկուցումների մէջ Կիւրիոն եպիսկոպոս ցոյց տալով վրաց եկեղեցու անկախ կառավարութեան պէտքը պատմական և կանոնական իրաւունքի հիման վրայ, իւր երկրորդ զեկուցման մէջ, որ մենք աւելի նպատակայարմար համարեցինք այժմ առաջ բերել, աշխատում է հերքել այն մեղադրանքը, թէ աւտոկեֆալիայի խնդիրն առաջ է մղում վերջին յեղափոխական շարժման շնորհիւ և յեղափոխականների կողմից: Վրաց յեղափոխականները, որոնք քիչ բացառութիւններով սոցիալ-դեմոկրատներ են և մերժում են և եկեղեցի, և քրիստոնէութիւն և ազգայնութիւն, ըստ Կիւրիոնի չէին կարող եկեղեցական խնդրով զբաղուել, եկեղեցու անկախութիւնը ժողովրդի ցանկութիւնն է, որ դժբաղդ հանգամանքների բերմունքով երկար ժամանակ զսպուած էր, արտայայտում է ներկայ վերանորոգչական շրջանում. նոյնը նկատում է նաև ռուսաց եկեղեցու մէջ:

Դեռ 1801 թուին, Վրաստանի միացման ժամանակ, վրաց ժողովրդի կողմից մատուցուած յիշատակագրի մէջ ցանկութիւն էր յայտնուած, որ կաթողիկոսի կոչումը և պաշտօնը պահպանուի Միացումից մի տարի յետոյ, 1802 թ. Կախէթի ազնուականութիւնը յայտնում է. «Երբ թըշնամիները մեզ նուաճում էին, չէին վերացնում մեր թագաւորի կոչումը և մեր արքեպիսկոպոսութիւնը»: 1810



Թուին մարտի 1-ին Ուրբնիսի Թեմի ժողովուրդը միջնորդութիւն է յարուցանում գեներալ Աորմասովի առաջ, վերականգնելու Ուրբնիսի արքեպիսկոպոսական աթոռ, սակայն այս խնդիրն անտեղի է նկատուում և մնում է առանց հետեանքի:

1817 Թուին Թելուի գաւառի ազնուականները դիմում են Վրաստանի և Իմերէթի սինոդական կանտորին, որ Կախէթի վերացուած վեց Թեմերի փոխանակ գտնէ փոխանորդ եպիսկոպոս նշանակուելի, որ նստի Կախէթում: Բայց այս օրինական խնդիրն ևս մերժուում է: — 1820 Թուին արեւմտեան Վրաստանի հոգեւորականութեան բողոքը, որ պաշտօնական լեզուի մէջ կոչուում է եկեղեցական ըունտ, վերջացաւ նրանով, որ Իմերէթից արքայութեան երկու հնագոյն մետրապօլիտներ, որոնք չէին ուղւում են Թարկուել ու Սինոդին և մինչև վերջին հնարաւորութիւնը պաշտպանում էին մայրենի եկեղեցու իրաւունքները: 1840 Թ. Վրաստանի սինոդական կանտորը միջնորդութիւն յարայց Գութայիսում ուսա արքեպիսկոպոս նշանակելու, սակայն հոգեւորականների և ժողովրդի կողմից անպաշտօն բողոք եղաւ, ուստի և միջնորդութիւնը չյարգուեց: Նոյն Թուին խնդիր յարուցուեց Գորիի Թափուր վիճակում մի ուսա վարդապետ փոխանորդ նշանակելու, իբրև Թէ վրաց հոգեւորականութեան մէջ արժանաւոր անձն չլինելու պատճառով. այս խնդիրն ևս չիրագործուեց, շնորհիւ ընդհանուր բողոքի: Սինոդն հաստատեց այս առաջարկը, բայց Նիկոլայ Պաւլովիչ կայսրը Սինոդի զեկուցման փրայ մակագրեց. «համաձայն եմ, բայց տեղական լեզուի գիտութիւնն այնտեղ համարեա անհրաժեշտ է, ժողովրդի վրայ հարկաւոր ազդեցութիւնն օւնենալու համար. ուստի և ցանկալի է լեզուն իմացող մարդիկ ընտրել, թէպէտ և ոչ այնքան զարգացած, որքան հարկաւոր է այստեղ»: 1841 Թուին Գորիայի իշխաններն ու ազնուականները եւզենից էկզարխին տուած խնդրի մէջ բացատրում էին, Թէ Գորիայի եպիսկոպոսական աթոռները վերանալուց յետոյ ժողովրդի կրօնական զգացումն սկսել է Թուլանալ, Թէ



մահմետական թուրքիայի սահմաններում ապրող գուրխացիք կարիք ունին անմիջական հովուական վերահսկողութեան և ուղղափառ հաւատի մէջ հաստատուելու, ուստի և միջնորդում էին նշանակել իրանց համար բնիկ արքեպիսկոպոս, որին եթէ պետական ռոճիկ չնշանակուի, իրենք պատրաստ են թոշակ տալու։ Այս խնդիրը ևս չի յարգւում։ Շատ անգամ գրաւոր բողոքներ է ներկայացրել եկեղեցու անողատութեան դէմ Իմերէթի Գաբրիէլ եպիսկոպոսը, բողոքել են թիֆլիզում ռուս փոխանորդ նշանակելու առթիւ, վերջապէս բողոքագրեր են ներկայացրել վրաց ազնուականութիւնը, հոգեւորականութիւնը և բանիմաց հասարակութիւնը։—Այս բոլոր իրողութիւնները ցոյց են տալիս, որ եկեղեցական անկախութեան ձգտումը վրաց ժողովրդի և հոգեւորականութեան մէջ նոր չէ առաջ եկել, այլ որ այդ ձգտումը շարունակ վառ է եղել ռուսաց տիրապետութեան ներքոյ, բայց նրա արտայայտութիւնները շարունակ ճնշուել և արգելքի են հանդիպել, իսկ ներկայ ընդհանուր շարժումների շնորհիւ աւելի ընդարձակ ծաւալ է ստացել և զօրեղ կերպով է արտայայտւում։—

Մինչ Կիւրիոն եպիսկոպոսի վերոյիշեալ զեկուցումները պարզում են եկեղեցական անկախութեան խնդրի պատմական և կանոնական հիմունքները և ցոյց են տալիս, որ այդ ձգտումը նոր չէ և ոչ յեղափոխական շարժման հետեանք, Իմերէթի Լէօնիդ եպիսկոպոսի զեկուցումը, որ ներկայացրած է եղել ս. Սինոդին,\* և որը կարգում է ժողովում Մոգիլիի Ստեփան եպիսկոպոսը, ներկայացնում է էքզարխական վարչութեան այն թերութիւնները և բացասական կողմերը, որոնք ոյժ են տուել աւտոկեֆալիայի պահանջին։

Լէօնիդի զեկուցումից երևում է, որ ռուս էքզարխները կառավարել են վրաց եկեղեցին իրանց սիրելիների

\* Տպւած է Собрание Отзвовъ епарх. преосвященныхъ, т. III, стр. 507 и сл.



և թեաքականների միջոցով, որոնք չեն վայելել ժողովրդի յարգանքը և վստահութիւնը, ճնշել են այն ամենը, ինչ որ վրացական, ազգային է եղել, հաալածել են վրաց եկեղեցու կրօնական այն սովորութիւնները, որ նա պահպանել է քրիստոնէական առաջին դարերից ի վեր, աշխատել են սննչացնել սրբազան հնութիւնները, ուստի և էքզարիները ոչ մի հեղինակութիւն չեն վայելել, ժողովրդի վստահութիւնից զրկուել է նաև վրաց հոգևորականութիւնը, կրօնական լուսաւորութիւնը նսեմացել է, ջերմեռանգութիւնը թուլացել, առաջ է եկել Հոսմի հետ միանալու շարժում։ Դպրանոցներում և ժողովրդական դպրոցներում պաշտօն վարողները եղել են ռուսներ, մինչև 1883 թիւը դպրոցներում չէ աւանդուել վրաց եկեղեցական լեզուն, ուստի և հոգևոր հովիւները չգիտեն ժամասացութեան լեզուն։ Մատաղ սերունդը չէր կրթւում եկեղեցական ոգով. սեմինարիան աւարտողներից շատ քչերն էին քահանայ դառնում, իսկ հոգևոր կոչում ընդունողները կրօնական ոգով տոգորուած չէին, արհամարհում էին վրաց ազգային-եկեղեցական սովորութիւնները, որով և վիրաւորում էին ժողովրդի կրօնական զգացումները։

Կիւրիոն եպիսկոպոսի պատմական տեսութիւններից երևում է, որ քրիստոնէութիւնը մտել է Վրաստան Արևմուտքից՝ Բիւզանդիայից, և որ վրաց եկեղեցին եղել է Անտիոքի յունադասան եկեղեցու իրաւասութեան ներքոյ և սչինչ կապ չէ ունեցել Արևելքի եկեղեցիների, յատկապէս հայոց եկեղեցու հետ իւր սկզբնաւորութեան առաջին իսկ օրերից։ Այս տեսութիւնը յեղաշրջում է պրոֆեսոր Մառի զեկուցումը, որի վերնագիրն է. «Պատմական տեսութիւն վրաց եկեղեցու, հնագոյն ժամանակներից»։

Հակառակ Կիւրիոնի և առհասարակ վրաց եկեղեցական պատմագիրների տեսութեան, մասնագէտ հայագէտի



և վրացագէտի պատժական և բանասիրական ուսումնական իրութիւնները բերել են նրան հետեւեալ եզրակացութիւններին:

Քրիստոնէութիւնն սկսուել է Վրաստանում չորրորդ դարում: այս բանին վկայ են վրացերէն Աստուածաշնչի բնագիրը, ժամատացութեան գրքերը և այլուքների ծագումը, որ սկսուել է քրիստոնէութեան հետ. կան նաեւ այդ ժամանակաւանից սուրբ հայրերի գրուածների թարգմանութեանց հատուածներ: Չորրորդից մինչև ևս թերորդ դարը քրիստոնէութիւնը յառաջադիմում է Վրաստանում, ինչպէս ցոյց են տալիս քաղմաթիւ գրաւոր յիշատակարանները, արձանագրութիւնները և, գլխաւորապէս, հայոց և վրաց բանակցութիւնը եկեղեցու բաժանման մասին: Վերջին խնդրին վերաբերեալ մեզ հասել է ի միջի այլոց Մցխէթի Արսենիոս կաթողիկոսի վրացերէն գրուածքը «Վրաստանի և Հայաստանի եկեղեցական բաժանման մասին» վերնագրով: Այս շրջանում վրացիք կելն են մզել պոքակական արեւադաշտութեան դէմ հայերի և ասորիների հետ միասին, ապա ընդունել են Քաղքեդոնի ժողովի որոշումները և բաժանուել են հայոց եկեղեցուց, մարառել են ննստորականութեան և միապետեաց դէմ:

Հնագոյն շրջանում վրաց եկեղեցին աւելի կապուած է եղել Երուսաղէմի եկեղեցու հետ. Մցխէթի խաչը ծագում է Երուսաղէմից, հնագոյն պատարագամատոյցներում կան մաղթանքներ Երուսաղէմի հայրապետների համար սկսած Յակոբոս Տեառնեղբորից, բայց ոչ մի մաղթանք Անտիոքի յունաբան պատրիարքների համար, ծննդեան տօնը կատարում էին Երուսաղէմի եկեղեցու սովորութեան համաձայն յունուարի 6-ին, ինչպէս պահպանել են յարդ հայերը, և ոչ դեկտեմբերի 25-ին: Անտիոքի եկեղեցին ընդունել է դեկտեմբերի 25-ին տօնելու սովորութիւնը 376-ին, մինչդեռ վրաց եկեղեցում դեռ երկար շարունակում էր հին սովորութիւնը, և այս կատեւորի է դարձնում վրաց եկեղեցու կախումը Անտիոքի եկեղեցուց: Վրաց Աստուածաշունչը, չնայելով որ շատ անգամ



սրբագրուել է յունասէրների կողմից, պահել է ասորապաղեստինական բնագրերի ազդեցութիւնը. վրաց և հայոց վիճարանութիւնների ժամանակ իւրաքանչիւր կողմը իրան համարում է հաւատարիմ, իսկ հակառակորդին՝ դաւաճանող երուսաղէմի եկեղեցու աւանդութիւններին։ Երուսաղէմի վանքերն ու միաբանութիւնները միանգամայն անկախ էին Անտիոքի պատրիարքութիւնից և ամէն տեղ պահպանում էին իրանց լեզուն, ինչպէս նաև Սև լեռան վրացական վանքերը 11-րդ դարում։

Արևմտեան Վրաստանում քրիստոնէութիւնը հաստատուել է անկասկած յունաց ազդեցութեամբ. Արխաղիան, որ այն ժամանակ ամփոփում էր իւր մէջ Իմերէթը և Մինգրելիան, ընդունել է քրիստոնէութիւնը Յուստինիանոսի օրով (527—565)։ Ս. Նունէի քարոզութիւնը վերաբերում է իսկապէս Արևմտեան Վրաստանին, և Անտիոքի ազդեցութիւնը տարածւում էր Արևմտեան Վրաստանի վրայ, իսկ Արևելեան Վրաստանի, Մցխէթի կաթողիկոսութեան վրայ Անտիոքը ազդեցութիւն չէ ունեցել, գոնէ այդ չեն հաստատում գրական աղբիւրները։

8-րդ դարի սկզբում եկեղեցական գործիչների ազդեցութեամբ Արևմտեան Վրաստանի աւանդութիւնը քրիստոնէութեան սկզբնաւորութեան մասին տարածուեց նաև Արևելեան մասի վրայ, և ժողովրդի յիշողութիւնից հեռզհեռէ անհետացաւ Արևելեան Վրաստանի եկեղեցու անկախ ծագումը, Արևելեան միւս եկեղեցիների—ասորոց, հայոց և պարսկական եկեղեցիների ծագման հետ միասին։ Երբ հայոց եկեղեցին ընդհանուր եկեղեցու վերաբերմամբ առանձնացած գիրք բռնեց, և վրաց եկեղեցին նրա հետ կռիւ էր մղում, ջանքեր եղան մոռացնել տալու այն ամէնը, ինչ որ կապում էր վրաց եկեղեցին հայկական հետ, աշխատեցին ցոյց տալ, թէ վրաց եկեղեցին, նաև արևելեանը, սկզբից ի վեր միացած է եղել յունաց եկեղեցու հետ։

Պատմական իրողութիւնն այն է, որ 9-րդ դարում ամբողջ վրաց եկեղեցին, և ոչ նրա որ և է մասը, հանդէս



է գալիս իբրեւ աւտոկէֆալ Ինչպէս յատուկ է արեւելեան ազգային եկեղեցիներին, վրաց եկեղեցու կառավարութիւնը վրաց ազգի ձեռքին էր—հոգեւորականների և աշխարհականների, եկեղեցու գլուխն էր ընտրուած կաթողիկոսը այս բառի ոչ քերականական, այլ իրական մտքով։ 10-րդ դարում, 950 թուին, խզուեց վերջին կապը, որ կապում էր վրաց եկեղեցին Երուսաղէմի եկեղեցու հետ. վրացիք իրաւունք ստացան իրանք մեռոն օրհնելու Երուսաղէմի տեղական ժողովի որոշումով։

Հնագոյն ժամանակի վերաբերմամբ չի կարելի ցոյց տալ դրական աղբիւրներ, որոնք հաստատէին նոյն իսկ Արեւմտեան Վրաստանի եկեղեցու կախումը Անտիոքի աթոռից, բացի երկու աղբիւրից՝ Սեւ լերան վանական նիկոնի և Եփրեմի դրուածքներից։

Վեցերորդ դարի վերջերից վրաց եկեղեցին, եթէ ոչ կանոնական որոշմամբ, գոնէ իրականապէս անկախ էր բիւզանդական եկեղեցուց, նրա իրաւասութիւնը հետզհետէ մեծացաւ և 8-րդ դարի կիսին խնդիր ծագեց նրա դիրքը միւս եկեղեցիների վերաբերմամբ որոշելու, նրա անկախութեանը կանոնական հաստատութիւն տալու, և որովհետեւ Կոստանդնուպոլիսը պատկերամարտների ձեռքումն էր, ուստի ուղղափառ վրաց եկեղեցու անկախութիւնը ճանաչուեց եւ հաստատուեց պատկերապաշտ Անտիոքի ժողովում։ Ժողովի արձանագրութիւնները չեն մնացել, բայց ժողովի մասին վկայում են թէ վրացիք և թէ անտիոքացիք—ասորիք և արաբները։

Անտիոքի գերագահութեան աւանդութիւնը վրաց մէջ ծագել է գլխաւորապէս 11-րդ դարում, Սեւ լերան միաբանութեան շնորհիւ, և այնտեղի վանական վրացի Եփրեմը կրկնել է Անտիոքի ժամանակագիրների լեզուն—դական տեղեկութիւնները, որովհետեւ ինքը եղել է ջերմ կուսակից յունականութեան։ Այն ժամանակ վրացական եկեղեցական շրջանը կատաղի թշնամի էր այն ամենին, ինչ որ յիշեցնում էր որ և է կապ հայոց եկեղեցու հետ։ Անտիոքի գերագահութեան աւանդութիւնը գալիս էր



ջնջելու հայոց և վրաց եկեղեցական հաղորդակցութեան բոլոր հետքերը: Գուցէ և եփրեմ չգիտէր վրաց եկեղեցու հին պատմութիւնը և աշխատում էր տալ Անտիոքացոց համար ընդունելի պատմական բացատրութիւնը վրաց եկեղեցու անկախութեան, ուստի և նա ընդունեց այդ աւանդութիւնը, որով անտիոքացիք հաշտուում էին վրաց եկեղեցու անկախութեան անվիճելի իրողութեան հետ: Անտիոքի եկեղեցում շատերը թշնամաբար էին նայում վրաց եկեղեցու անկախութեան վրայ և համարում էին այդ եկեղեցին ոչ առաքելահիմն, ուստի Գէորգ անունով մի վանական աշխատեց ցոյց տալ Անտիոքի պատրիարքին, թէ Վրաստանում քարոզել է Անդրէաս նախակոչ առաքնալը, իսկ Սիմոն Կանանացին թաղուած է Արխաղիայում: ԺԱ-րդ դարում Անտիոքի պատրիարքն անհերքելի փաստաթղթերի ճնշման տակ ստիպուեց նորից ժողովական որոշումով հաստատելու ոչ միայն վրաց կաթողիկոսի անկախ ընտրութեան, այլ և եկեղեցու կառարեալ անկախ կառավարութեան իրաւունքը: Պատմութիւնն ինքը հանդէս բերեց վրաց եկեղեցու իրական աւտոկեֆալիային կանոնական հաստատութիւն տալու խնդիրը, և Պետրոս III. պատրիարքի օրով (1052—1057) Անտիոքի ժողովը վերահաստատեց վրաց եկեղեցու աւտոկեֆալիան:

Պրոֆեսոր Մառի այս ուշադրաւ զեկուցման մէջ արծարծուած մտքերը ամփոփւում են հետեւեալ կէտերի մէջ.

1) Վրաց եկեղեցին հիմնել և կազմակերպուել է բիւզանդական կայսրութեան մեծ եկեղեցու ազդեցութիւնից դուրս, առաքելական քարոզութեան և Երուսաղէմի եկեղեցական աւանդութիւնների հիման վրայ, ինչպէս արևելքի միւս ազգային եկեղեցիները:

2) Վրաց եկեղեցին, որ սկզբից ի վեր ունէր իւր սեփական մայրենի լեզուն, վեցերորդ դարի սկզբում իրաւազօր է հանդիսանում իւր գործերը կառավարելու տեղական ազգային ժողովներով և ունի ամբողջացած նուիրապետական—վարչական կազմակերպութիւն, գլուխ ու



նենալով ընտրեալ կաթողիկոսին բիւզանդական կայսրութիւնից և նրա թագեցութեան շրջանից միանգամայն անկախ:

3) Իւր զարգացման ընթացքում՝ 8-րդ դարում մօտենալով յունական եկեղեցուն, աւտոկեֆալ վրաց եկեղեցին ինքը ձգտում է կանոնական որոշումով ճանաչել տալու իւր անկախութիւնը, կայսերութեան եկեղեցու սկզբունքների համաձայն: Այդ ձգտման իրագործումը տեղի է ունենում 8-րդ դարի կիսին Անտիոքում, որովհետեւ այդ ժամանակ բիւզանդիայում եկեղեցին ուղղափառութեան թշնամիների՝ պատկերաժարածների իշխանութեան ներքոյ էր:

4) Օգտուելով անկախութեամբ և ինքնավարութեամբ, բուն հայրենիքում, սուրբ տեղերում և վանական դաղութներում, 8-րդ դարից սկսած իր թագեցութեան ենթարկելով նաև ուղղափառ (քաղքեղանիկ) հայոց թեմերը, 11-րդ դարում վրաց եկեղեցին ընդհարուեց Անտիոքի յաւակնութիւնների և յունաց կայսրների եկեղեցական քաղաքականութեան հետ: Անտիոքի յաւակնութիւնները վրաց եկեղեցու վերաբերմամբ յառաջ եկան Սև լեւոն վանքերում վրաց և Անտիոքացիների յարաբերութիւններից, իսկ բիւզանդացոց եկեղեցական քաղաքականութիւնը՝ հայաստանի թեմերի իրաւասութեան խնդրից: յոյները հետզհետէ թեմեր էին ձեռք բերում հայաստանում և դրաւելու վրայ էին նաև այն թեմերը, որոնց մէջ ապրում էին վրաց եկեղեցու իրաւասութեան տակ գտնուող քաղքեղանիկ հայեր, հաւանօրէն յոյները խնդիր յարուցին վրաց կաթողիկոսի իրաւունքների մասին, թէ ինքնագլուխ էր արդեօք և թէ իրաւազօր էր արդեօք ուղղափառ հայոց թեմերը կառավարելու: Այսպէս ծագեց 11-րդ դարում վրաց եկեղեցու աւտոկեֆալիայի խնդիրը, որը և վճռուեց վերջնականապէս յօգուտ վրացիների Անտիոքում, Պետրոս պատրիարքի օրով:

5) Վրաց եկեղեցին ոչ թէ այս որոշումից յետոյ, այլ սրանից առաջ ունէր կատարեալ ազատութիւն, կա-



աւարում էր անկախօրէն իւր գործերը ինքնագլուխ կաթողիկոսի իշխանութեան ներքոյ, ունենալով օրէնստու մարմին՝ տեղական եկեղեցական ժողովներ, պաշպանելով իւր առանձնայատկութիւնները եկեղեցական ճարտարապետութեան, արուեստի, հոգեւոր երգեցողութեան, տօնակատարութիւնների և այլ ազգային ուրոյն սովորութիւնների մէջ, անշեղ պահելով մի և նոյն ժամանակ յունական եկեղեցու դաւանութիւնը:

Թէպէտ և Բուսկիիչ աւագ քահանան խիստ քննադատում է Մառի այս ուշագրաւ զեկուցումը և գտնում է ոչ այնքան գիտական և հիմնաւոր, այլ կառուցուած աւանդութիւնների և անձնական ենթագրութիւնների վրայ, սակայն թեր և դէմ կարծիքներից պարզում և ընդհանուր հաւանութիւն է գտնում զեկուցման պատմական մասը, իսկ կանոնական մասը նկատում է թոյլ և վրաց եկեղեցու անկախութեան կանոնական հիմունքը չապացուցուած:

Պրոֆեսոր Յագարելին նկատելով, որ հեռաւոր անցեալը ունի լոկ պատմական հետաքրքրութիւն, իւր զեկուցումն ի պաշտպանութիւն աւտոկեփալիայի հիմնում է 17 և 18-րդ դարերի պաշտօնական փաստաթղթերի վրայ: Պարսից շահերի և թուրքաց սուլթանների ֆիրմանները 17 18-րդ դարերում ճանաչում են վրաց կաթողիկոսներին ինքնագլուխ, հոգեւորականութիւնը և ժողովուրդն ընտրում էր կաթողիկոսին, շահը կամ սուլթանը, նայելով երկրի քաղաքական վիճակին, հաստատում էին: Կաթողիկոսի անկախութիւնը ճանաչել են իրանց գրութիւնների մէջ նաև ռուսաց պատրիարքները, թագաւորներն ու մինիստրները Պետրոս մեծից առաջ և նրանից յետոյ մինչև միացումը: Երկրի քաղաքական միացումից յետոյ ինքնավար եկեղեցին ինոգական կառավարութեան ենթարկելը, ջմահ ընտրեալ կաթողիկոսին առանց դատաւանի և առանց ժողովական որոշման հեռացնելը, տեղական եկեղեցական ժողովները վերջացնելը, ռուսաց սրբերի տօներ մտցնելը առանց վրաց եկեղեցու հաւա-



նութեան կամ ժողովական որոշման, այս ամենը ծագարելի յայտարարում է ապօրինի և հակառակ ընդհանուր եկեղեցական ժողովների վճիռներին և կանոններին:

Կաթողիկոսների գիրքը և իրաւունքները աւելի պարզ ներկայացնում է Կիւրիոն եպիսկոպոսը նիստերի վիճաբանութիւնների ընթացքում: Ըստ Կիւրիոնի վրաց օրէնքներով կաթողիկոսը ինքնուրոյն և լիազօր պետ էր եկեղեցու, ինչպէս թագաւորը պետութեան\*։ Նրան էր պատկանում եկեղեցու բոլոր գործերի լիակատար և անկախ կառավարութիւնը, նաև եկեղեցականների և գիւղացիների դատաստանը: Վախտանգ IV թագաւորի օրէնքներն այսպէս են որոշում կաթողիկոսի իրաւական գրութիւնը. «Ամենայն յանցանք թագաւորի և կաթողիկոսի դէմ նոյնն է համարում, քանի որ նրանցից մէկն իշխանութիւն ունի՝ մարմնի, իսկ միւսը՝ հոգու վրայ, նրանք հաւասարապէս ընդունում են Աստուծոյ օրհնութիւնը և մարդկանց յարգանքը: Թագաւորն աւելի յարգանք են տալիս միմիայն երկիւղից, իսկ մենք ոչ մէկին միւսի վերաբերմամբ առաւելութիւն չենք տալիս» (Сборникъ законовъ ц. Вахтанга, стр. 12, § 25.) Կաթողիկոսն ունէր իւր բանակը, որին կամ ինքն անձամբ էր առաջնորդում պատերազմի ժամանակ, կամ նրա գիւղացիներից նշանակուած հրամանատարը: Կաթողիկոսներն ընտրւում էին գլխաւորապէս արտօնեալ դասակարգից:

Ի պաշտպանութիւն վրաց եկեղեցու անկախութեան խօսում են նաև Պալմով և Զաօգերսկի պրոֆեսորները, որոնց կանոնական բացատրութիւնները լրացնում են վերոյիշեալ պատմական և կանոնական տեսութիւնները: Պրոֆեսոր Պալմով իւր զեկուցման մէջ, որ կրում է «Պատմական համեմատութիւններ վրաց եկեղեցու աւտոկեֆալիայի խնդրի առթիւ», վերնազիրը, ապացուցանում է, որ ընդհանուր յունադաւան եկեղեցու մասերը կազմող տեղական ազգային եկեղեցիները ստացել են աւտոկե-

\* АКТЫ Кав. Арх. Ком. т. I, стр. 28.



ֆալիա իրականապէս, և ոչ կանոնական կարգով, երբ երկիրը քաղաքական անկախութիւն է ձեռք բերել, այսպէս անկախ կառավարութիւն են ձեռք բերել յունական, սերբական և բուլղարական եկեղեցիները, վերջինս պատմութեան ընթացքում մի քանի անգամ ստացել է անկախութիւն և դարձեալ կորցրել, նայելով քաղաքական հանգամանքներին: Ուրեմն կանոնական որոշումն այն նշանակութիւնը չէ ունեցել, ինչ որ պատմական իրողութիւնը: Հասնելով այս եզրակացութեան, պրոֆեսոր Պալմով առաջարկում է յանուն արդարութեան և յօգուտ քրիստոնէութեան այժմեան վրացական էքզարխութիւնը բաժանել երկու եկեղեցական—վարչական շրջանների՝ վրացական և ռուսական: Խիտ վրացաբնակ շրջանում վերականգնել վրաց կաթողիկոսութիւնը, իսկ Կովկասի և Անդրկովկասի միւս յունադաւան ժողովրդներից կազմել մի թեմ, ռուսաց Սինոդի իրաւասութեան ներքոյ:

Պրոֆեսոր Զաօգերսկի երկար բացատրելով առաքելական և ժողովական կանոնները և ցոյց տալով, որ ազգային ուրոյն սովորութիւնները և ազգային կամ քաղաքական անկախութիւնը հիմք են ծառայել դաւանակից եկեղեցիների վարչական անկախութեան, եզրակացնում է, որ ինչպէս յունադաւան ազգային եկեղեցիները—Ռուսականը, Կալովիցի, Չերնոգորիայի, Սինայի, Յունաց թագաւորութեան, Բուկովինա—Դալմատիայի, Սերբիայի և Ռումինիայի եկեղեցիները անկախ և ինքնավար են, այնպէս էլ և նոյն հիմունքների վրայ ինքնավար է եղել և պէտք է լինի վրաց եկեղեցին: Ոչ թէ պէտք է նրան նոր ինքնավարութիւն տալ, այլ պէտք է վերականգնել դարեր շարունակ եղած և այժմ խլուած ինքնավարութիւնը: Ռուսաց եկեղեցին կամովին պէտք է հրաժարուի իւր ինամատարութիւնից վրաց եկեղեցու նկատմամբ:

Մ. Բ. Ղազարեան.

Պետերբուրգ

(Վերջը միւս անգամ)